ԴԻՄՈՒՄ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Օգոստոսի 27ին Արցախի Ազատագրման Մարտիկները այդ վերնագրով մի թռուցիկ են տարածել երկրում ստեղծուած քաղաքական նոր կացութեան պայմաններում մարզի իրադրութեան մասին։ Փաստաթղթում մասնաւորապէս նշւում է, որ այսօր Արցախում մարզային իշխանութեան վերականգնման գաղափարը քիչ է մնում, որ ներկայացնեն իբրեւ բոլոր չարիքներից պաշտպանող մի գրահ։ Թող, իբր մեր իշխանութիւնը վերականգնեն եւ մենք կը դառնանք մեր հողի տէրը։ Եւ մեզ ոչինչ չի խանգարի։ Բայց ամենագլխաւորն այն է, թէ ու՞մ կը պատկանի մարզային իշխանութիւնն ինքը։ Զգիտես ինչու, այս մասին ոչ ոք չի խօսում։ Չեն խօսում, որովհետեւ հենց այս հարցի մէջ է թաքնուած մեր ժողովրդի վզին փաթաթւող խաբէութեան ողջ էութիւնը։

Թռուցիկում նաեւ այն միտքն է ընդգծւում, որ այսօր իշխանութիւն ձեռք բերելու համար միմիանց կոկորդ են կրծում երկու ուժեր. մէկը՝ Կոմկուսի դրօշի տակ, Մութալիբովի գլխաւորութեամբ, միւսը ժողովրդավարութեան դրօշի տակ՝ Աժծի գլխաւորութեամբ։

Որպէս գլխաւոր եզրակացութիւն հնչում է այն միտքը, որ մեզ հարկաւոր է մի իշխանութիւն, որը չի ծառայի ուրիշներին, այլ կը պաշտպանի մեր շահերն ու երկրամասը։